




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18613

371.1

2-24

1925

352

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ


ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ս Ի Ի Ր Ի Ո Յ



1925

2001



2010

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԶՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՍԻՐԻՌՈՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ն Պ Ա Տ Ա Կ Ը

Ուսուցչական Միութեան նպատակն է Սուրբոյ Հայ
Ժողովրդի կրթական գործին բարձրացմանը նպաստել:
Այս նպատակին հասնելու համար պիտի կիրար-
կուին հետեւեալ միջոցները՝

Ա. — ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ա) Միութիւնը պիտի աշխատի բարձրացնել ա-
նոնց մտաւոր և բարոյական մակարդակը, ասոր համար
պիտի կազմէ՝

Ինքնազարգացման խմբակներ.

Ընկերական կանոնաւոր պարբերական հաւա-
քումներ.

Ակումբներ.

Քննական և ուսումնասիրական պտոյտներ՝ մո-
տաւոր և հեռաւոր վայրերու մէջ:

բ) Պիտի նպաստէ անոնց մասնագիտական պատ-
ասութեան, հաստատելով գրադարաններ և ընթեր-
ցարաններ:

Կազմելով գրացուցակներ հայ և օտար գիտական
մանկավարժական-հոգեբանական գրքերու և պարե-
րականներու:

Կազմակերպելով դասախօսութիւններ, ամառ-
նային և կիսամսեայ դասընթացներ, փորձառական-
քննադատական և տիպար դասեր:

Յարաբերութիւն հաստատելով տեղական օտա.

րազգի և ևրոպական ուսուցչական միութիւններու հետ:

Դիւրութիւններ ստեղծելով փափաքողներու համար՝ որ արտասահման երթան և կարենան ուսումնասիրել զանազան երկիրներու կրթական գործը:

Հրատարակելով գիտական և մանկավարժական հոգեբանական թերթ, ուսուցիչներու և աշակերտներու համար:

Տպագրել տալով հանրամատչելի մանկավարժական-հոգեբանական գրքեր և դասագրքեր, թէ ինքընազիր և Գէթարգմանածոյ:

Աշխատելով պատկանեալ ազգային մարմիններու միջոցաւ հիմնել վարժապետանոց և հաստատել երկրորդական վարժարաններու կից՝ մանկավարժական լրացուցիչ դասընթացքներ:

Ինչպէս նաև միջոցներ հայթայթելով արժանաւորներու՝ ևւրոպական նմանօրինակ հաստատութեանց մէջ մանկավարժական դասընթացքներու հետեւելու համար:

գ) Պիտի աշխատի բարելաւել կրթական պաշտօնեաներու օնկեսաւան և բնկեային վիճակը, ասոր համար թելադրութիւններ պիտի ընէ պատկանեալ մարմիններուն, որպէսզի՝

Մանրամասնօրէն ճշդութիւն ուսուցիչներու պարտականութեանց և իրաւունքներու սահմանները:

Որպէսզի՝ անհամաձայնութիւնները հարթութիւն (ուսուցչական-հոգաբարձական) խառն փոփոխութեամբ լծոցաւ:

Որպէսզի՝ զատարակութեան արժէքը և ուսուցչութեան վարկը բարձր պահելու համար կրթական ասպարէզէն հեռու մնան անպատրաստ և անարժան տարրերը:

Որպէսզի՝ ուսուցչական պաշտօնը անկայուն, թափառական և կարճատեւ ըլլալէ դադրի:

Որպէսզի՝ թոշակի տակ ստեղծուի համաձայն



38538-67

տեղական պայմաններու, ուսուցիչներու կրթութեան աստիճանի և փորձառութեան, ապահովելով նաև վճարումներու կանոնաւորութիւնը:

Որպէսզի փոխադարձ օգնութեան և հանգստեան թոշակի սնտուկ հաստատուի:

(Առայժմ կարօտ ուսուցիչներուն կը յատկացուի հարիւրին 10ը):

Միութիւնը պիտի աշխատի նաև որպէսզի դիւրութիւններ ձեռք բերութիւն գնումներու, երթևեկութեան և այլն պարագաներու համար:

Որպէսզի՝ իրաւաբանական օգնութիւն հասցնէ իր անդամակիցներուն և ներքին անհամաձայնութիւնները կարգադրութիւն ընկերական դատարաններով:

Պիտի հիմնէ նաև տեղեկատու սենեակ մը, որպէսզի անով դիւրութիւն տայ իր անդամներուն պաշտօն ճարելու և դպրոցական վարչութիւններուն ալ ուսուցիչ գտնելու, յարաբերութեան մէջ դնելով պաշտօն և պաշտօնեայ փնտուղները, ինչպէս նաև այդ գրասենեակին միջոցաւ պիտի աշխատի պատասխանել կրթական հարցին և գործին վերաբերեալ իրեն ուղղուած հարցումներուն:

Բ. — ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Միութիւնը պիտի աշխատի ուսուցչական ժողովներու, մամուլի և այլ ամեն օրինաւոր միջոցներով ընել պէտք եղած թելադրութիւնները ազգային մարմիններուն, որպէսզի դպրոցներու կազմը, մատակարարութիւնը և ծրագիրը ենթարկուին հիմնական քաղաքականութեան, արդի մանկավարժական պահանջներուն համաձայն: Առ այժմ ասոր համար նկատի պիտի առնուին հետեւալ սկզբունքներն ու կէտերը՝

Կրօնական և ազգային ոգի, տեղական պայմանները, ժողովրդապետակ ն սկզբունք:

52457-Ա. Կ.

Առնուազն միջնակարգ կրթութեան աստիճան կրթական պաշտօնեաներու համար:

Կրթութեան որոշ չափ մը և մանկավարժական փորձառութիւն կեդրոնական և զաւառական ուսումնական խորհուրդներու անդամներու:

Ուսումնի խորհուրդը կը ստանձնէ շրջանի վարժարաններուն կրթական վերին հսկողութիւնը, իսկ հոգաբարձութիւնը՝ մատակարարական մասը:

Շրջանային կրթական տեսուչներ:

Հոգաբարձական և ծնողական պարտադիր խառն ժողովներ:

Կրթական տուրք:

Դպրոցական թանգարան, գրադարան և այլն:

Գ.— ՀԱՍՍՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Միութիւնը պիտի ջանայ ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ արթնցնել կրթութեան և լուսաւորութեան պահանջը և հետաքրքրութիւն առաջ բերել դէպի կրթական գործը: Ասոր համար պիտի կազմակերպէ ծնողական ժողովներ, հանրամատչելի դաստիարակութիւններ, դպրոցական հանդէսներ, ցերեկոյթներ, երեկոյթներ և այլն:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ա Ձ Մ Ը

1.— Միութիւնը ունի հետեւեալ կազմը՝ Անդամներ, Մասնահիւղեր, Կեդրոնական Վարչութիւն և Ընդհանուր ժողով:

ԱՆԴԱՄՆԵՐ

2.— Անդամները կրնան ըլլալ պատուակալ և գործօն:

3.— Պատուակալ անդամները կ'ընտրուին Ընդհանուր ժողովի ձայներու երրորդի մեծամասնութեամբ: մանկավարժական և դպրոցական դործին մեծ ծառայութիւն մատուցանող ազգայիններէ:

4.— Պատուակալ են անոնք որ ա) անուազն միանուազ 50 Ա. Ոսկի կը նուիրեն, բ) 20 տարի ուսուցչական պաշտօն վարած են և գ) օգտակար դասագիրք և մանկավարժական երկասիրութիւն պատրաստած են:

ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

5.— Միութեան կրնան անդամակցիլ՝ այս Ծրագիր-հանոնագիրը ընդունող բոլոր ուսուցիչները:

6.— Անդամակցելու համար պէտք է ստանալ մասնաճիւղի վարչութեան հաճութիւնը:

7.— Վարչութեանէն մերժուողները կրնան դիմել մասնաճիւղի ընդհ. ժողովին:

8.— Անդամակցութեանէն կրնան դադրիլ ա) կամովին, բ) ուսուցչական պաշտօնը ձգելու և այլ գործով զբաղելու պարագային, գ) մասնաճիւղի անդամներու երկու երրորդի պատճառաբանուած վճիռով, դ) ոչ արդարացուցիչ պատճառներով երեք ամիս անդամավճար չտալու պարագային:

9.— Անդամակցութեանէ դադրողը ո՛րեք դրամական պահանջ ընելու իրաւունք չունի:

10.— Միայն դործօն անդամները կրնան ըլլալ ընտրող և ընտրելի:

ՄԱՍՆԱՃԻՒՂ

11.— Մասնաճիւղ մը կրնայ կազմուիլ՝ երբ անդամակցողներու թիւը առնուազն ութն է:

12.— Մասնաճիւղի մը կազմութիւնը անհրա-

ժեշտ է հաղորդել Կեղերոնական Վարչութեան և ստանալ անոր համամտութիւնը :

13. — Մասնաձիւղերու վարչութիւնները կ'ընտրուին տարին անգամ մը և կը բաղկանան երեքէն հինգ անդամներէ :

14. — Մասնաձիւղերը իրենց եկամուտի հարկւրէն 75ը պարտին Կեղերոնական Վարչութեան յանձնել :

15. — Բաղաքի մը մէջ մէկ մասնաձիւղ կրնայ ըլլալ :

16. — Ամէն մէկ մասնաձիւղ պիտի ունենայ իր վարչութիւնը և Ընդհ. Ժողովը :

ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐՆ ԵՆ՝

17. — Մասնաձիւղերու դրամներու և գոյքերու պահպանումն ու կարգադրութիւնը :

18. — Ներկայացնել իր տարեկան րոյր գործառնութեանց համարատուութիւնը մասնաձիւղի Ընդհ. Ժողովին և զրկել Կեղերոնական Վարչութեան :

19. — Կազմել տարեկան նախահաշիւ, ներկայացնելու համար իր Ընդհ. Ժողովին քննութեան և վաւերացման :

20. — Գործադրել մասնաձիւղի որոշումներն ու Կեղերոնական Վարչութեան յանձնարարութիւնները :

21. — Նախանձախնդիր ըլլալ Միութեան ծաւալումին ու բարգաւաճման :

22. — Կազմել զեկուցումներ մասնաձիւղի ընդհանուր Ժողովին համար :

23. — Գոհացնել աշխատիլ մասնաձիւղի անդամներուն գիտական և մանկավարժական պահանջները :

24. — Վարչութեան անդամները վերընտրելի են :

ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՆԵՐ

25. — Իւրաքանչիւր մասնաձիւղ պարտաւոր է առ-

նուազն երեք ամիսը անգամ Ընդհ. Ժողով գումարել :

26. — Ի հարկին կրնան գումարուիլ արտակարգ Ընդհ. Ժողովներ վարչութեան հրաւերով կամ մասնաձիւղի անդամներու մէկ երրորդի պահանջումով :

27. — Ընդհանուր Ժողովը օրինական կը համարուի մասնաձիւղի անդամներու առնուազն կէսէն մէկ աւելին ներկայութեամբ :

28. — Առաջին Ընդհ. Ժողովը տեղի չունենալուն պարագային՝ երկրորդ Ժողովի ներկաներուն թիւը օրինական կը համարուի երբ անդամներուն մէկ երրորդը ներկայ է :

29. — Իւրաքանչիւր Ընդհ. Ժողով կ'ունենայ Առնապետ մը և Առնապետի մը՝ որոնք Վարչութեան անգամ ըլլալու չեն :

30. — Ընդհանուր Ժողովը կը քննէ նախկին վարչութեան րոյր գործառնութիւններն ու հաշիւները, կ'ընտրէ նոր Վարչութեան անդամները և անոր ապագայ գործունէութեան համար ուղղութիւններ կը գծէ :

31. — Կեղերոնական Վարչութիւնը ի հարկին իր կողմէ կը զրկէ քննիչներ՝ մասնաձիւղերու վարչութեանց գործառնութիւնները քննելու և իրեն տեղեկացնելու համար :

32. — Մասնաձիւղերու Ընդհ. Ժողովները կ'ընտրեն ընդհ. Ուսուցչական Ժողովի համար պատգամաւորներ, հոգալով անոնց ճամբու ծախքը :

ԸՆՎԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՅՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ

33. — Ընդհանուր Ուսուցչական Ժողովը տեղի կ'ունենայ տարին անգամ մը, ամրան արձակուրդին. անհրաժեշտ եղած պարագային կրնան գումարուիլ

նսե արտակարգ Ընդհ. ժողովներ՝ Կեդրոնական Վարչութեան հրաւերով կամ մասնաճիւղերու առնուազն մէկ երրորդին փափաքով :

34. — Ընդհ. Ուսուցչական ժողովը տեղի կ'ունենայ՝ երբ նախապէս երաշխաւորուի պատգամաւորներու ամբողջական թուին, առնուազն կէսէն մէկ աւելին ներկայութիւնը :

35. — Մասնաճիւղ մը իրաւունք ունի մէկ պատգամաւոր զրկելու Ընդհ. ժողովին : 8էն աւելի անգամ ունեցող մասնաճիւղ մը իւրաքանչիւր 15 ի համար մէկ պատգամաւոր զրկելու իրաւունք ունի :

36. — Ընդհանուր ժողովը իր ներքին կանոնադիրը կ'ունենայ :

37. — Ընդհ. ժողովն է Միութեան բարձրագոյն մարմինը :

38. — Ան կը քննէ, կը հաստատէ նախկին Կեդրոնական վարչութեան ամբողջ գործունէութիւնը և հաշիւներուն եղրակացութիւնը թերթերով հրատարակութեան կուտայ :

39. — Ընդհանուր ժողովը կը քննէ մասնաճիւղերու վարչութեանց և իւրաքանչիւր անգամի զրկած տեղեկութիւններն ու առաջարկները և ընթացք կուտան անոնց :

40. — Ընդհ. ժողովը կը կարգադրէ Կեդր. վարչութեան և մասնաճիւղերու վարչութեանց միջև ծագած անհամաձայնութիւնները :

41. — Կը լսէ և վիճարանութեան կ'ենթարկէ կրթական գործը չօչափող տեսական և գործնական հարցերու մասին բանախօսութիւններ :

42. — Կրնայ Ծրագիր-Կանոնադրի որ և է փոփոխութիւն կատարել ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ :

43. — Կ'ընտրէ նոր Կեդրոնական վարչութեան

անդամներ :

44. — Կ'որոշէ յաջորդ Ընդհ. ժողովին տեղը :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

45. — Միութիւնը կ'ունենայ Կեդր. վարչութիւն մը ուսուցչական Ընդհ. ժողովի կողմէ որոշուած քաղաքի մը մէջ :

46. — Վարչութիւնը կը բաղկանայ եօթը անդամներէ և չորս փոխանդամներէ, որոնք վերընտրելի են և կը պաշտօնավարեն տարի մը՝ մէկ Ընդհ. ժողովէն միւսը : Կեդր. վարչութիւնը պիտի վարէ իր քաղաքի մասնաճիւղին գործերը :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐՆ ԵՆ

47. — Ընտրել իր Ատենապետը, Ատենադպիրն ու Գանձապահը :

48. — Վարել Միութեան ամբողջ գործերը՝ Ծրագիր-Կանոնադրի և Ընդհ. ժողովին որոշումներուն համաձայն :

49. — Կեդրոնացնել բոլոր մասնաճիւղերու գոյքերուն և դրամի վերաբերեալ տեղեկութիւնները :

50. — Ստանալ իւրաքանչիւր տարուան վերջը բոլոր մասնաճիւղերու հաշիւներն ու յաջորդ տարուան նախահաշիւները և վաւերացնել, ի հարկին կատարելով փոփոխութիւններ :

51. — Պատրաստել Միութեան ընդհանուր գործերուն համարառութիւնը և ներկայացնել Ընդհ. ժողովին :

52. — Քննել մասնաճիւղերու վարչութեանց միջև ծագած անհամաձայնութիւնները և տալ իր վճիռը :

53. — Պատրաստել Ընդհ. ժող. ի որակից զոյն ժողովէն երկու ամիս առաջ զրկել զայն մասնաճիւղերուն :

54. — Պաշտօնական մէն մի գրութիւն պիտի կրէ Ատենապետին և Ատենադպիրին ստորագրութիւնները, դրամական գործերու վերաբերեալ գրութիւնները պիտի կրեն նաև Գանձապահի ստորագրութիւնը:

55. — Ընթացիկ գործերու համար գանձապահը կրնայ իր մօտ պահել առաւաւելն 10 Սուր. ոսկի, մնացածը պահ տալով Վարչութեան կողմէ որոշուած դրամատան մը մէջ՝ ընթացիկ հաշուով:

56. — Վարչութեան անդամները հաւաքաբար պատասխանատու են Ընդհ. Ժողովին՝ Միութեան բոլոր գոյքերուն ու դրամներուն համար:

ՄԻՈՒԹԵԱՆ ԵԿԱՄՈՒՏԻ Ա՛ԼԲԻԻՐՆԵՐՆ ԵՆ՝

57. — ա) Իւրաքանչիւր անդամակցողի մուտքի դրամը նուազագոյն 25 զրշ. Սուրիական:

58. — բ) Իւրաքանչիւր անդամի ամսավճարը առ նուազն 10 զրշ. Ս.

59. — գ) Նուիրատուութիւններու, թատերական ներկայացումներու, երեկոյթներու, լիճակահանուածութիւններու, դասախօսութիւններու ևլն. հասոյթներ:

Ծանօթ. — Միութեան ընդհ. եկամուսնեւունց առ այժմ 100 ին 10ր իբր պահեստի դրամ անձեռնմխելի կը մնայ, պահեստի դրամը ո եւ ե ասեւ եւ ո եւ ե պահեստով չի կրնար ծախսուիլ առանց Ընդհ. Ժողովի երկու երուրդի մեծամասնութեան հաւանութեան:

Կ Ն Ի Ք

60. — Միութիւնը կ'ունենայ իր կնիքը «Հայ Ուսուցչական միութիւն Սիւրիոյ 1925» մականգրութեամբ, Հայերէն-Ֆրանսերէն-Արարերէն:

ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

61. — Մասնաճիւղերը կը լուծուին երբ անդամներուն թիւը ութէն պակաս է. իսկ Միութիւնը կը լուծուի երբ ընդհանուր անդամներուն թիւը 25 էն պակաս է: Լուծուած մասնաճիւղի մը բոլոր գոյքերը կը յանձնուին Կեդր. Վարչութեան: Սիւրիոյ Ընդհ. Միութիւնը լուծուելու պարագային, գոյք, պատրաստ դրամ, ևայլն կը յանձնուին Հայաստանի լուսաւորութեան նախարարութեան:





2013

2013

ՀՀ Ազգային գրադարան



86443
NL0054264

